

Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն

Գործարար ծրագիր

2015-2020թթ

<<Հայկական Կարմիր Խաչի ընկերություն>> ՀԿ

Վայոց Ձորի մարզային մասնաճյուղ

1. Կազմակերպության նկարագիրը

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) ստեղծվել է 1920թ:

Կազմակերպության գրանցման վկայականի համարն է 03Ա061187:

ՀԿԽԸ գործունեությունն իրականացնում է 11 մարզային, 2 տարածաշրջանային, 52 համայնքային մասնաճյուղերի միջոցով, որոնցից մեկն է ՀԿԽԸ Վայոց Ձորի Մարզային Մասնաճյուղը:

Հայկական Կարմիր Խաչի ընկերության Վայոց Ձորի մարզի մասնաճյուղը ստեղծվել է 1996թ: 1996 թվականից ի վեր ՀԿԽԸ ՎՁՄՄ իրականացնում է իր առաքելությունը ՀՀՎՁՄ ողջ տարածքում՝ համախմբելով մարդասիրության ուժը ազգաբնակչության խոցելիությունը նվազեցնելու նպատակի շուրջ:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, հոգևոր, դասակարգային պատկանելիությունից և քաղաքական հայացքներից:

1.2 Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

Հայկական կարմիր Խաչի Ընկերություն (ՀԿԽԸ) ՀԿ իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, հասարակական կազմակերպությունների մասին օրենքով, ՀԿԽԸ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.2. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են (տվյալ մասնաճյուղի իրականացման հետ կապված)

1. ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Հայկազի Եղիազարյան,

2. ՀԿԽԸ ՎԶՄՄ նախագահ Լ. Մարգարյան

3. ՀԿԽԸ ՎԶՄՄ գործ. Տնօրեն Է. Մարգարյան

4. ՀԿԽԸ ՎԶՄՄ կամավորներ

1.3 Կազմակերպության գործունեության ոլորտը

Հիմնադրման պահից ի վեր , ՀԿԽԸ տարիներ շարունակ ակտիվ և լայնածավալ գործունեություն է իրականացնում՝ հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը և ցուցաբերելով իր անաչառ օգնությունը բազմազան ոլորտներում: ՀԿԽԸ գործունեության հիմնական ուղղություններն են.

- Սոցիալ-առողջապահություն
- Աղետների կառավարում
- Բնակչության տեղաշարժ
- Առաջին օգնություն
- <<Որոնում>> ծառայություն
- Կարմիր խաչի սկզբունքների և արժեքների տարածում
- Երիտասարդական ուղղություն

Վայոց Ձորի ՄՄ

II Կազմակերպության գործունեության ծրագիրը

2.1 Ծրագրի նպատակը

Ուսուցանել ՎԶՄ-ի բնակչությանը և բարձրացնել նրա իրազեկվածությունը սոցիալ-առողջապահական, աղետների նախապատրաստման և արձագանքման, երիտասարդական հիմնահարցերին առնչվող և այլ ոլորտներում:

2.2 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները ՀԿԽԸ ՎՁՄՄ-ն իրականացնում է դրամաշնորհային ծրագրեր, որոնց իրականացման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում մի շարք միջազգային դոնոր կազմակերպություններ, որոնցից են Կարմիր Խաչի Միջազգային ֆեդերացիան, Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեն, Ավստրիական Կարմիր Խաչը, Ամերիկյան Կարմիր Խաչը, Դանիական Կարմիր Խաչը, Գլոբալ Հիմնադրամը և այլն:

2.3 Ծրագրի իրականացման ժամկետները.

Սույն ծրագրը նախատեսվում է իրականացնել 5 տարվա ընթացքում:

2.4 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Ստորև ներկայացված են ՀԿԽԸ ՎՁՄՄ գործունեության հիմնական ուղղություններն ու դրանց իրականացման համառոտ նկարագրությունը, որոնց իրականացման համար ՀԿԽԸ ՎՁՄՄ -ն գրասենյակի կարիք ունի՝

Սոցիալական գործունեություն ՎՁՄՄ

ՀԿԽԸ ՎՁՄՄ –ն իրականացնում է մի շարք սոցիալական ծրագրեր, ուղղված միայնակ ծերերի, հանրակացարանակաբնակ և առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը:

Առողջապահական գործունեություն

Առողջապահական բնագավառում ՀԿԽԸ ՎՁՄՄ-ն իրականացնում է տուբերկուլոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր ու լայնածավալ հանրային միջոցառումներ, առողջ ապրելակերպի ու բնապահպանական թեմաներով դասընթացներ:

Աղետների կառավարում

Աղետների կառավարման ուղղությամբ ՀԿԽԸ ՎԶՄՄ –ն իրականացնում է բազմաբնույթ գործունեություն՝ նվազեցնելու բնակչության խոցելիությունը բնական և տեխնաժին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնելով ՀԿԽԸ ՎԶՄՄ աղետների նախապատրաստման և արձագանքման համակարգը:

Առաջին օգնություն

ՀԿԽԸ-ն իրականացնում է Առաջին օգնության գիտելիքների և հմտությունների տարածում, տարաբնույթ դասընթացների անցկացում, ուսումնական ձեռնարկների հրատարակում, ԱՕ կամավորական խմբերի մրցումների մասնակցության, մասսայական միջոցառումների ժամանակ ԱՕ ծառայությունների մատուցում, ԱՕ հեռուստահաղորդումների պատրաստում, տարբեր նշանակության ԱՕ հավաքածուների համալիր:

Որոնման ծառայություն

Որոնման ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորման, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը; Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանն ու հատկացմանը:

Երիտասարդական գործունեություն

Իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցություն ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին, իրականացնում է ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրեր կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ, մասնակցում է միջազգային

հավաքների, ճամբարների, թրեյինգների, կազմակերպում է Կարմիր խաչի գաղափարների՝ դպրոցներում և բուհերում լուսաբանմանը՝ նպաստելով կամավորական շարժման խթանմանը:

Կարմիր խաչի սկզբունքների և արժեքների տարածում

Կարմիր խաչի սկզբունքների և արժեքների տարածման ուղղությամբ ՀԿԽԸ ՎՁՄՄ- ն ջանում է բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման պատմության, բաղկացուցիչների, հիմնարար սկզբունքների, միջազգային մարդասիրական իրավունքի, Կարմիր խաչի խորհրդանշանների գործացության չարաշահման, Ազգային ընկերության գործունեության և առաքելության:

2.5 Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլազացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

Ա. Եղիազարյան
ՀԿԽԸ գլխ. Քարտուղար



ՀԿԽԸ Վայոց Ձորի ՄՄ-ի գործ. Տնօրեն Է. Սարգսյան